

ըսաւ թէ Մոհամմէտ Իպն Ալի Իպն Ապտի Թալապ զինքը զրկած է իրենց իբր կառավարիչ, եւ թէ իրեն հրամայուած է սպաննել անոնք որ օրինաւոր համարեցան անոր (Հիւսէյնի) սպանութիւնը, եւ անոր ընտանիքին արեան վրէժը լուծել: Ըսաւ նաեւ թէ Աստուծոյ կերպով որ եւ ամ սպաննողը Իպն Մըրճանայի, եւ եւ ամ վրէժը լուծողը Աստուծոյ մարգարէին ընտանիքին անկէ՝ որ անոր անիրաւութիւն ըրաւ: Շիրինըն խումբ մը անոր հաւատաց եւ բազմութիւն մը ըսաւ. Ելլենք, երթանք հարցնենք Մոհամմէտ Իպն Ալիի: Ելան, հարցուցին անոր. ան ալ ըսաւ. Ասկէ աւելի թանկազին բան չկայ մեզի որ մէկը մեր վրէժը լուծէ, մեր իրաւունքը պաշտպանէ ու մեր թշնամին սպաննէ: Այն ատեն զացին ալ Մուխթարի, հաւատարմութեան երդում ըրին անոր, պայմանաւորութեան հետը եւ հաւաքուեցան խմբովին:

Իսկ Իպն ալ-Ջուպայրի Քուֆայի գործակալն էր Իպն Մուխթարի, որ սկսաւ սարսափեցնել ու հալածել Շիրինըն: Այն ատեն ալ Մուխթար ժամադրուեցաւ իր ընկերներուն հետ, ու ելան երեկոյեան արեւմուտքէն վերջ, սպարապետ ունենալով Իպրահիմ Իպն Մալըք ալ-Հարթէ Էլ-Ալ-Հարթ. նա գոչեց. Ելլենք Հիւսէյն Իպն Ալիի վրէժը լուծելու: Այս բանը պատահեցաւ 66ին (685). կատարի պատերազմ մը տեղի ունեցաւ իրենց ու Ապտալա Իպն Մուխթարի միջեւ, որուն նմանը երբեք այդքան սաստիկ ու դժուար եղած չէր: Յետոյ Իպն Մուխթարի գնաց դէպի պալատը, յորդորեց մարդիկը որ իրեն հնազանդութեան երդում ընեն: Անոնք ալ հնազանդութիւն խոստացան. Աստուծոյ մարգարէին ընտանիքին: Ալ-Մուխթար վճարեց Իպն Մուխթարի հարիւր հազար տինար, եւ ըսաւ անոր. Հիմա ա՛ռ այս դումարը եւ սպասէ մինչեւ որ քեզի դամ:

Անկէ վերջ ալ Մուխթար զրկեց իր գործակալները դէպի նահանգները, հանեցին ու որ կար (հակառակորդ) ու հոն բնակեցան, իբր ալ Մուխթարի հրահանգով:

Այն ատեն Մուսուլի կառավարիչն էր Ապտըրահման Իպն Սայիտ Իպն Քայս ալ-Համատանի: Անոր վրայ խուժեց Օպէյ-տալա Իպն Ջիատի՝ յետ սպաննելու Սիւլէյման Իպն Սարտը: Ապտըրահման պատերազմեցաւ անոր դէմ եւ զրոյժ իմացուց ալ Մուխթարի: Ալ-Մուխթար անոր զրկեց Եզիտ Իպն Անսը, յետոյ զրկեց Իպրահիմ Իպն Մալըք Իպն Հարթէ ալ-Ալ-Հարթ, որ ճակատեցաւ Օպէյտալա Իպն Ջիատի ու սպաննեց զայն: Սպաննեց նաեւ ալ-Հասսին Իպն Նամիր աս-Սըբուհի եւ Շուբահ-պիլ Իպն Տհիլ-Բըլայ ալ-Հիւսէյնի ու անոնց զիակները կրակով այրեց: Մինչ ինքը Իրաքի հրամանատար էր, ալ Մուխթարի կողմէն՝ Մուսուլի, Ատրպատականի եւ Հայաստանի վրայ կառավարիչ մը նշանակեց (685ին), եւ Մետինէ զրկեց Օպէյտալա Իպն Ջիատի գլուխը, Ալի Իպն ալ-Հիւսէյնի, իր մարդերէն մէկու մը հետ, եւ ըսաւ անոր. Կեցիր Ալի Իպն ալ-Հիւսէյնի դրան քով. երբ տեսնես որ դուները բացուած են ու մարդիկ ներս մտած են, այն ժամանակ երբ սեղանի նստած են, հասիր վրանին: Հասաւ պատգամաւորը մինչեւ Ալի Իպն ալ-Հիւսէյնի դուռը, եւ երբ դուները բացուեցան, ու մարդիկ կերակուրի մտան, պոռաց իր ամէնէն բարձր ձայնով. Ո՛վ մարդարէին տան ընտանիքը, ու առաքելութեան աղբիւրը, հրեշտակներ ու իջեւանը, յայտնութեան բնակարանը, ես՝ ալ Մուխթար Իպն Օպայտի առաքեալն եմ, հետս ունիմ Օպէյտալա Իպն Ջիատի գլուխը:

Հաշիմի⁽¹⁴⁾ ցեղախումբին կիներէն մէ-

(14) Հաշիմեանները Գուրէյշ ցեղախումբին մէկ մասնաճիւղն էին: Անոնց ձեռքն էր կրօնական իշխանութիւնը: Անոնցմէ էին Մոհամմէտ եւ Ալի: Իսկ Օմայեանները Գուրէյշ ցեղախումբին ուրիշ մէկ մասնաճիւղին կը պատկանէին: Ունէին քաղաքական իշխանութիւնը: Անոնցմէ էր Մուսուլի, հիմնադիր Օմայեան կայսրութեան, որ տեւեց զրեթէ մէկ դար. մինչեւ անցաւ Աբրահեաններուն ձեռքը, որոնք Հաշիմեան մասնաճիւղին կը պատկանէին, իբր Մոհամմէտի Աբրահա հօրեղորդի մէկ սերած:

կը չմնաց որ չպոռար. այն ատեն պատգամաւորը մտաւ ու հանեց գլուխը: Երբ Ալի Իպն ալ-Հիւսէյն զայն տեսաւ, ըսաւ. Աստուած թող հեռու պահէ զայն մինչեւ դժոխք: Ուրիշներ ալ պատմեցին թէ Ալի Իպն ալ-Հիւսէյն Երբեք խնդումներս չտեսնուեցաւ հօրը սպանութենէն ետք, բացի այդ օրէն: Ուղտեր ունէր որոնք Սուրիայէն պտուղ կը բերէին իրեն. երբ բերուեցաւ Օպէյտալա Իպն Ջիատի գլուխը, հրամայեց բերել այդ պտուղները եւ զանոնք բաժնեցին Մետինէի բնակիչներուն: Աստուծոյ առաքեալին կիները սանտրուեցան ու հինալով չպարուեցան: Ալ-Հիւսէյնի սպանութենէն ի վեր անոնցմէ ոչ մէկը սանտր կամ հինալ դորձածած էր:

Ալ-Մուխթար հետապնդեց ալ-Հիւսէյնը սպաննողները, անոնցմէ չատերը սպաննեց, այնպէս որ չատ չմնաց անոնցմէ: Սպաննեց նաեւ Օմար Իպն Սատը եւ ուրիշներ, տանջեց զանոնք եւ կրակով այրեց:

Եագուպի, Բ. 307-309

9.

Ապտալապի, Մրուան Իպն Մոհամմէտ եւ Հայերը

Ապտալապի (685-705) թողուց ալ Մուհալապ Իպն Ապի Սաֆա, կուռելու կրթմանի⁽¹⁵⁾, խորհրդի⁽¹⁶⁾ կոչուած ապրտամբներուն դէմ: Ալ-Մուհալապ զանոնք հետապնդեց մինչեւ սպաննելը անոնց գլուխաւորը, որ կը կոչուէր Նաֆը Իպն Էլ-Խաւորը, որ կը կոչուէր Նաֆը Իպն Էլ-Ապրաք, որուն անունով կը կոչուին Ապա-

(15) Կրման՝ Պարսկաստանի մէջ քաղաք մըն է: (16) խորհրդի կը կոչուէին այն իսլամ աղանդաւորները, որոնք թէ՛ Մուսուլիայի եւ թէ Ալիի դէմ էին:

(17) Ղեւոնդ պատմիչ եկեղեցիներուն մէջ Հայ աղանդներուն այրուելը կը զնէ Ապտալապի որդիներն՝ Վլիթի խալիֆայութեան ժամանակ (705-715), եւ Ապտալապի խալիֆայութեան ատեն կը զնէ Ջերմաճորի ջարդը, Ս. Գրիգորի վանքին կողմէն, Ջերմաճորի ջարդը, Ս. Գրիգորի վանքին կողմէն, Ջերմաճորի ջարդը եւ Գուկանի Հայերուն ջարդը:

րըքա, այսինքն Ապրաքի հետեւողներ, ու կեցաւ Կրմանի մէջ: Ապտալապի զինքը կառավարիչ կարգեց խորասանի Ուսայի-այի տեղ: Յետոյ խալիֆան իր եղբայրը Ապտալապի-Ապիդ՝ զարձուց Եզիպտոս ու Մարոք, եւ միւս եղբայրը Պըշըր՝ կարգեց Իրաքի կառավարիչ:

Իսկ իր եղբայրը Մոհամմէտ՝ կառավարիչ կարգեց Մուսուլի, եւ Պարսպէն հոն փոխադրեց Ուղտ եւ Ռապիյա կոչուած արար ցեղախումբերը: Ինքը (Մոհամմէտ) արշաւեց Հայաստանի վրայ, որովհետեւ երկրին բնակիչները ապստամբած էին. ջարդեց եւ կողոպտեց: Յետոյ զրեց երկրին իշխաններուն, որոնք ազատներ կը կոչուէին, եւ ապահովութեան դիրք տուաւ անոնց, ու խոստացաւ նշանակել անոնց իւրաքանչիւրին պատուոյ աստիճանը: Այդ պատճառով անոնք հաւաքուեցան խալիֆալի կեղեցիներուն մէջ. հրամայեց փայտ հաւաքել եկեղեցիներուն շուրջը եւ փակել տուաւ անոնց դռները: Յետոյ հարուածեց այդ եկեղեցիները կրակով ու այրեց զանոնք: Մոհամմէտ Իպն Մրուան իկեցաւ Հայաստանի մէջ, մինչեւ իր մահը⁽¹⁷⁾:

Եագուպի, Բ. էջ 324-325

10.

Ապտալապի-Վլիթի Իպն Հիշամ եւ Երրորդ Հայքի արշաւաւքը

102ին (720) Ապտալապի-Վլիթի Իպն Հիշամ արշաւեց Յունաց երկիրը: Մտաւ գետին հունը, Անտիոքի քով, եւ հանդիպե-

լալթելը Արաբներուն, եւ Սահակ կաթողիկոսի առաքելութիւնը: Ղեւոնդ, տպ. Պետերբուրգ, 1887, գլ. է. էջ 19-31: Նոյնպէս Վարդան պատմիչ, տպ. Վենետիկ, 1862, էջ 72, կը զնէ Վլիթի խալիֆայութեան ժամանակ: Իսկ Յովհան կաթողիկոս, տպ. Երուսաղէմ, 1867, էջ 124, 125, հայ նախարարներուն եկեղեցիներուն մէջ ժողովելը եւ զանոնք այրելը, արար պատմադիւրներուն պէս Ապտալապի խալիֆայութեան ժամանակ կը զնէ, ոչ թէ Վլիթի:

ցաւ Օմար Իպն Հուպայրա Յոյներուն՝ Չորրորդ Հալիֆի մէջ, ուր զիրենք պարտութեան մատնեց եւ եօթը հարիւր հոգի զերեց:

Եագուպի, Բ. 378

11.

Ալ-Ճառահ գորավարին արշաւանքները Ալմագ երկրին մէջ

105ին (723) ալ-Ճառահ Իպն Ապտալա արշաւեց ալ-Հաքամի Ալաններուն դուռը եւ անկէ դուրս ելաւ:

Եագուպի, Բ. 378

12.

Հիշամ Իպն Ապտալ Մէլիք եւ Հայաստանի ռաշիդները

Հիշամ՝ Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ կարգեց, 107ին (725), Մասլամա Իպն Ապտալ Մէլիք, որ զրկեց Սալիտ Իպն Ամր ալ-Հարաշի, յառաջապահ գունդին հետ: Սալիտ հանդիպեցաւ Խաղարներու բանակին, որոնց հետ կային տասը հազար Իսլամ գերիներ: Ինքը պատերազմեցաւ Խաղարներու դէմ, զանոնք նուաճեց, սպաննեց անոնց մեծ մասը, ու գերիներն ազատեց անոնց ձեռքէն: Այս գործը կատարեց շատ անգամներ, սպաննեց Խաղարներու որդին ու զրաւեց անոր ձեռքէն բազմաթիւ քաղաքներ: Խաղարներու որդւոյն գլուխը զրկեց Հիշամի՝ առանց Մասլամայի հաւանութիւնն առնելու: Այն ատեն բարկացաւ ու նամակ գրեց անոր՝ զինքը յանդիմանելով, ու պաշտօնանկ ըրաւ: Անոր տեղը կարգեց Ապտալ Մէլիք Իպն Մասլամ ալ-Ռաքայլի եւ անոր հրամայեց չղթաթաղաւ բանտարկել Ամր ալ-Հարաշին՝ Քապալա կոչուած քաղաքի մը մէջ:

Երբ Մասլամա հասաւ այն քաղաքը, առջեւը բերին ալ-Հարաշին, բարկացաւ անոր, պատուեց անոր դրօշակը ու զինքը զրկեց Պարտաւի բանտը: Հիշամ յանդիմանական նամակ մը գրեց անոր, ու զրկեց

պատգամաւորներ՝ որոնք Սալիտ Իպն Ամր ալ-Հարաշին բանտէն հանեցին ու անոր տարին:

Իսկ Մասլամա քաղեց Խաղարներու երկիրներուն մէջ, մինչեւ հասաւ Ճըրդան (Վրաստան), զայն նուաճեց ու բնակիչները ջարդեց: Յետոյ զնաց Շարուան, բնակիչներուն հետ հաշտուեցաւ ու Մասլամա թողնելու երկիրը եկաւ. անոր բնակիչներուն հետ ալ հաշտութիւն կնքեց: Պատգամաւոր զրկեց մինչեւ Թապարտտան ու հաշտութիւն ըրաւ անոր բնակիչներուն հետ ալ: Առանց զիմադրութիւն դրնելու՝ քաղեց երկիրներուն մէջ, մինչեւ որ հասաւ Վարդանի երկիրը (Վարդանակերտ), ուր հանդիպեցաւ Խաղարներու Խաղան թագաւորին: Մասլամայի հետ կային զբաւած երկիրներու արքայիկներէն ոմանք: Մրուան Իպն Մուհամմէտը զրաւ յառաջապահ գունդին վրայ. անիկա թշնամիին հանդիպելով՝ օրերով պատերազմեցաւ, զուգէ ալ կորսուեցաւ: Մասլամայի սկսան ըսել. Սպաննուեցաւ Մրուան: Իսկ ինքը կ'ըսէր. Աստուծոյ կ'ըսէր թէ կարելի չէ որ մեռնի, առանց զինքն ողջունելու իբր խալիֆա. ու զրաւեց բոլոր երկիրները:

Հիշամ պաշտօնանկ ըրաւ Մասլաման ու կառավարիչ կարգեց Մրուան Իպն Մուհամմէտ, որ զնաց զէպի բերդը՝ ուր կար Ծարիրներու թագաւորը: Հոն կար ոսկեղէն զահ մը, զոր ժամանակին զրկած էր պարսիկ թագաւորներէն մէկը: Կը պատմուի թէ Անուշիրուան զրկած էր զայն, ու անոր համար Ծարիր (Սարիր, արաբերէն լեզուով՝ անկողին, զահ կը նշանակէ) կոչուած: Հաշտուեցաւ անոր հետ, հազար հինգ հարիւր սեւահեր սորուկ տալու պայմանով. յետոյ զնաց Թուամանշահի վրայ եւ հաշտուեցաւ անոր արքայիկին հետ, ու եկաւ Հիմդին(18): Պատերազմե-

(18) Շարուան ու Թապարտտան Ծարիրներու երկիրը, Թուամանշահ, Զիրիկտան եւ Հիմդին կը գտնուէին Կասպից ծովու եզրերը:

ցաւ Ժողովուրդին դէմ, ու սպաննեց անոնցմէ բազմաթիւ մարդիկ: Հաւաքեց ուտելիքները, զրկեց զէպի Պապ քաղաքը ու հոն կեցաւ(19):

Եագուպի, Բ. 381-382

13.

Հիշամ խալիֆան ու հայկական ձեռագործը

Հիշամ՝ Օմայեան հարստութեան ամէնէն կորովի ու առնական մարդն էր: Ազահ էր, նախանձոտ, թանձր, կոշտ, անիրաւ, անգութ, անողորմ ու երկայնալեզու: Իր օրերուն տարածուեցաւ Ժանտախտը. այնպէս որ մարդերէն շատերը մեռան եւ զրաստներն ու կովերը փճացան:

Անոր վրայ տիրապետողն էր ալ-Ապրաշ Իպն ալ-Ռաշիտ ալ-Քապի. ոստիկանութեան պետն էր՝ Քապ Իպն Համրտ ալ-Ապտաի, պահակապետը՝ Ար-Րապիյ Իպն Զիատ Իպն Սապուր, թիկնապահն էր իր ազատագիրը՝ ալ-Հարիշ:

Ինքը յօրինել տուաւ մետաքսի վրայ բանուածներ, ասեղի գործեր, հայկական(20) աշխատութիւններ եւ զգեստներու ամէն տեսակ:

Իր խալիֆայութիւնը տեւեց քսան տարի:

Եագուպի, Բ. 393-394

14.

Մրուան Իպն Մուհամմէտ կ'արշաւէ Հայաստան

122ին (739) Մրուան Իպն Մուհամմէտ արշաւեց զէպի Հայաստան, եւ Սիւլէյման Իպն Հիշամ զէպի Մալաթիա(21):

Եագուպի, Բ. 395

15.

Սիւլէյմանի եւ Մրուանի արշաւանքները զէպի Հայաստան

123ին (740), Սիւլէյման Իպն Հիշամ կատարեց ամառային արշաւանքը. իսկ Մրուան Իպն Մուհամմէտ արշաւեց զէպի ծիլան ու Մուղան Հայաստանէն:

Եագուպի, Բ. 395

16.

Մրուան Իպն Մուհամմէտ եւ Հայաստան

126ին (743), Թապէզ Իպն Նայիմ ալ-Ճուսհամի յարձակեցաւ Մրուանի վրայ, երբ (Մրուան) Հայաստան կը գտնուէր: Մրուան յաղթեց անոր ու մեկնեցաւ Հայաստանէն, իրեն փոխանորդ կարգելով Ասրմ Իպն Ապտալա Իպն Եզիտ ալ-Հիլալի. իսկ Պապի եւ Ապուսպի(22) վրայ փոխանորդ կարգեց Իսհակ Իպն Մուսլիմ ալ-Ռաքայլի:

Եագուպի, Բ. 402-403

17.

Մրուան Իպն Մուհամմէտ՝ Հայաստանէն կը մեկնի, Խալիֆա ըլլալով համար

Թագաւորեց Իպրահիմ Իպն էլ-Վալիտ Իպն Ապտալ Մէլիք Իպն Մրուան, որուն մայրը կը կոչուէր Սուլայր: Ասիկա թագաւոր եղաւ այն օրը՝ երբ մեռաւ Եզիտ Իպն էլ-Վալիտ: Ու կեցաւ չորս ամիս, մինչեւ որ հասաւ Մրուան Իպն Մուհամմէտ Հայաստանէն՝ զինքը (Իպրահիմը) պաշտօնանկ հռչակելով: Երբ (Մրուան) հասաւ Խաղան, մարդիկը յորդորեց որ զինքը խալիֆա ճանչնան: Միջադեպի

(19) Տես Ղեւոնդ, զէ. Ժ. էջ 100-111. Արաբները ճորայ Պահակին՝ Պապ կամ Պապ էլ Ապուսպ կ'ըսէին:

(20) Իպն Հաուբալ աշխարհագիրն ալ կը յիշէ հայկականը, որ պէտք է ըլլաւ հայկական բանուած, հայկական ձեռագործ:

(21) Ղեւոնդ, զէ. ԻԱ. էջ 112-113:

(22) Պապ եւ Ապուսպ, ինչպէս տեսնուի վերը՝ հին ատեն կը կոչուէր Նաեւ Դարպանտ, իսկ Հալիլը կը կոչէին ճորայ Պահակ կամ Դրուք Աղուանից, Կասպից ծովու եզրերը: Տես Նաեւ Ղեւոնդ, զէ. ԻԴ. էջ 116 եւ 133: Վարդան, ԼԹ. էջ 74:

Հայաստանի ոստիկանները
Մրուանի խալիֆայությունի մասնակ

Ժողովուրդը դադարի կերպով զինքը խալիֆա ճանչցաւ, ու նա եկաւ Միջագետքի զինուորներով: Հանդիպեցաւ Ուսլիտ Իպն Ապլ Մէլիքի երկու որդիներուն՝ Պըշըրի եւ Մասրուրի, որոնք Հալէպի մէջ բանակած էին: Պարտութեան մատնեց անոնց երկու բանակները ու զանոնք դերեց: Յետոյ դնաց հասաւ մինչեւ Հոմս, որուն վերայ կ'իջնէր Ապտիւլ Ազիզ: Իպրահիմ լուրը առնելուն՝ անոր դէմ զրկեց Սիւլէյման Իպն Հիշամ Իպն Ապտիւլ Մէլիքը, որ հանդիպեցաւ Մրուանի եւ հետը եղող Միջագետքիներուն, Գեննեսերինցիներուն եւ Հոմսցիներուն: Բախումը տեղի ունեցաւ Այն էլ-Ճարի (Այն Ճար) մօտ՝ Դամասկոսի նահանգին մէջ: Պատերազմը սկսաւ չորեքշաբթի օրը, 7 Սէֆէր 127ին (Նոյեմբեր, 744), ու իրարմէ բաժնուեցան: Յաջորդ օրը պարտուեցաւ Սիւլէյման Իպն Հիշամ ու անոր ընկերները, որոնք դիմեցին Իպրահիմի: Այն ատեն Մրուան եկաւ Ալէյի վանքը, եւ Դամասկոսցիները զինքը խալիֆա ճանչցան: Մտաւ քաղաքը եւ Իպրահիմ զինքը պաշտօնանկ հռչակեց ու Մրուանը խալիֆա ճանչցաւ, երկուշաբթի օրը Սէֆէր ամսոյն կիսուն, 127ին (Նոյեմբեր, 744): Շարունակեց մնալ Մրուանի հետ, մինչեւ որ խեղդուեցաւ Ջապ⁽²³⁾ զեռին մէջ, Ապտուլլա Իպն Ալիի դէմ ճակատամարտի ժամանակ⁽²⁴⁾:

Եագուպի, Բ. 403

Բնագրէն քարգմանեց
Հ. Օ. ԱԴԱՄԵԱՆ

Եագուպի, Բ. 404-405

(23) Ջապ զեռը կը գտնուի Իրաքի մէջ եւ Տիգրիսի մէջ ճիւղն է:

(24) Ղեւոնդ, զլ. ԻԴ. էջ 116-118: Վարդան, ԼԹ. էջ 74, 75:

ԱՐԱԲԿԵՐ ԵՒ ԻՐ ԲԱՐՔԵՐԸ

(Շար. տե'ս Բազմ. 1957, Թ. 7-8, էջ 160)

ԳԼՈՒԽ Ե.

ՋԵՐՄԵՌԱՆԴ ՈՒ ԲԱՐԵԿԻՐԹ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՐՔԵՐ

1. - ԳԻՒՏ ԽԱԶ

Գիւտ Խաչին՝ «Վեմ իսաչ» կ'ըսէ Արարիկերցին, Պէշիկըն ա'լ իջէրի դաչ: Ստուգիլ ցուրտը կը կոխէ եւ կարելի է'լ լար ալլեւս դուրսը մնալ: Գիւղերէն կը վերադառնան տուն, այգիներէն կը հրաժարին, տանիքներու վրայ չեն գիշերեր, ցուիքներու վրայ չարուած պատեղներու, ազատքեղի, ոահաններու, անանուխներու, վարունգի, սմբուկի... սմբած ու դեղնած ածուֆները կը պարպեն եւ տուփերը մահաւոր մէջ կ'ամփոփեն որ չփոխեն եւ դարնան տնկադործութեան պատրաստ ըլլան: Երբ հետեւեալ օրը չ'աւելան մշակուած հանքերը կը խոհանոցին պատրաստ հարստութիւններն են՝ դարունէն մինչեւ աշուն:

2. - ԱՍՏՈՒԱՄԱՅԱՅՏՏՈՒԹԻՒՆ

Եւ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Արարիկերու Ժողովուրդը ջերմեռանդութեամբ կը տօնէ ասոնք. բքարեր հովերն ու ցուրտն ալ կ'արհամարհէ եւ չարան ու անկեղեցի կը յաճախէ մօտ ու հեռաւոր թաղերէ՝ մուշտակներու եւ թուրդեղեխներու մէջ փաթթուած, իր սրտաբուխ աղօթքներն ընելու, խոստովանանք ըլլալով Ս. Հաղորդութիւն առնելու Ջալաւոր պատարագի ժամանակ, «Որհնուրդ

մեծ եւ սքանչելի» լսելու համար: Վերադարձին մաս եւ օրհնուած ջուր բերելով նաեւ այն տնեցիներուն՝ որոնք ծերութեան եւ հիւանդութեան պատճառով չեն կրցած եկեղեցի երթալ:

3. - ԱՄԱՆՈՐ ԿԱՄ ՆՈՐ ՏԱՐԻ

Նոր տարւոյ նախորդ գիշերը, տանտիկինը շատ պատրաստութիւններ ունի կատարելիք՝ փոքր մանչաղջիկներուն ուրախութիւն պատճառելու համար:

Երբ երեկոյան ընթրիքը կ'աւարտի, մեծերը սուրճի կը նստին, հին տարւոյն յաջող կամ անյաջող դէպքերուն վրայ կը խօսակցին, փոքրիկներուն կը յիշեցնեն իրենց անցուցած բարի կամ չար, աշխատասէր եւ ծոյլ ընթացքը եւ կը յորդորեն որ այնուհետեւ պէտք են այլեւս բարի, ջանասէր եւ հնազանդ ըլլալ, որովհետեւ տարի մըն ալ մեծցան, հետեւաբար աւելի սիրով եւ եռանդով եկեղեցի եւ դպրոց պիտի յաճախեն, զգեստները, դրքերը, տետրակները մաքուր պիտի պահեն, խելօք պիտի ըլլան եւ այլն, որպէսզի վաղը որ Նոր տարի է՝ Կապանդ Պապան իրենց աղուոր բաներ կախէ բխրիկէն (ծխան) վար, ապա թէ ոչ կը զրկուին: Անոնք որ այս իրիկուրնէ կը սկսին խելօք, բարի եւ հնազանդ ըլլալ, պէտք է չուտով երեսնին խաչակնքեն ու անկողին մտնելով՝ քնանան: Տղաք՝ խոստովանելէն ուրախացած չուտով անկողին կը մտնեն ու կը քնանան, հաւատալով անմեղութեամբ բոլոր